կոբայ՝ խնդրեաց հրաման 'ի դատաւորէն նորոգել զհարաւային որմն Ս. Փրկչի վանաց, իսկ դատաւորն յետ հարցանելոյ զորպէսն յայլազգեաց Սիոնի. հրաման] եւ նմա, եւ նա նորոգեաց զայն, ١٠١٢ (1603)։ Զկնի երից ամաց նորոգեաց նաեւ զորմն Հրեշտակապետի վանաց, և զքանի մի խուցս։

Այլ մինչդեռ միտրանք Հայոց պարապեալ էին յայսպիսի իրս, եկն հրաման Արքունուստ առ դատաւորն Երուսաղէմի, գրել զվանօրայս ազգաց որոց տիրել կամէին Յոյնք՝ ١٠١٥ (1606)։ Եւ դատաւորն սկիզբն արար գրել զնոսա որք էին։

ՎԱՆՕՐԱՅՔ ՎՐԱՅ

1°. Խաչավանքն՝ արտաքոյ քաղաքին Երուսաղէմի յարեւմուտս 'ի մէջ ձորոյն։

2°. Ս. Եղիայի վանքն՝ 'ի վերայ ճանապարհին Բեթղեհէմի։

3°. Ս. Տիմիթրիայ վանքն՝ 'ի մէջ քաղաքին Երուսաղէմի։

4°. Խնձորի վանքն՝ 'ի մէջ քաղաքին, որ յառաջագոյն կոչէր տուն Հաննայի։

5°. Զուանկուլի վանքն Ս. Նիկողայոսի՝ 'ի մէջ քաղաքին։

6°. Ս. Յակոբայ վանքն՝ առ դրան տաճարի Ս. Յարութեան 'ի ներքոյ զանգակատան։

ՎԱՆՕՐԱՅՔ ՍԵՐՎԻԱՅԻՈՅ

1°. Վանք Ս. Սաբայի, արտաքոյ քաղաքին Երուսաղէմի։

2°. Վանք Ս. Բասիլիոսի՝ 'ի մէջ քաղաքին։

3°. Վանք Ս. Միքայելի՝ 'ի մէջ քաղաքին։

4°. Վանք Ս. Յովհաննու, Ապթուս կոչեցեալ՝ 'ի մէջ քաղաքին։

5°. Վանք Ս. Յովհաննու՝ Թուասիս կոչեցեալ։

6°. Վանք Ս. Գէորգայ՝ 'ի ներքին կողմն Լատին վանաց՝ 'ի մէջ քաղաքին։

7°. Քրիստոսի բանտն՝ հանդէպ դրան Սուրբ Յարութեան։